Խաչիկ Դաշտենց

Ռանչպարների Կանչը

3

ԱՐԱԲՈ

Ծծմակի կողմերով մի կածան էր ոլորվում դեպի վանքի կողմերը: Բռնեցի այդ կածանն ու գնացի: Հասա Մեղրի քարերին և Ծիրնկատարի լանջերով բարձրացա վեր: Հանկարծ կածանը չքացավ, ու դեմս ցցվեց ծառերով ծածկված մի ապառաժ: Նստեցի այդ քարին, որ հանգստանամ: Չնկատեցի, թե ինչպես նիրհը հաղթեց ինձ, ու ես այդ քարին ընկած քնեցի:

Երազ տեսա: Երկու տղամարդ կուզեկուզ գալիս էին Ծծմակի կողմից: Ճանաչեցի: Մեկը պարոն Սենեքերիմն էր, իսկ մյուսը՝ Մելքոն վարժապետը: Առաջինը վազեց կաքավների ետևից: Մեկ-երկուսին բռնեց դրեց ծոցը, իսկ մյուսները խախաբալով փախան թաքնվեցին ծերպերում: Երկրորդը մոտեցավ Մեղրի քարերին: Վերարկուի տակ աման կար: Բռնեց ժայռերից ծորացող մեղրի դեմ: Մեղուները պարսերով եկան լցվեցին ամանի մեջ: Մեկ էլ տեսնեմ՝ ի՛նչ աման, ի՛նչ բան: Մելքոն վարժապետի ձեռքին Նարեկն է ու աստվածային մեղուները մեջը կողք-կողքի շարված:

Ու մի ծանոթ ձայն է հնչում ականջիս. «Գոնե այնքան սովորեիր, որ կարողանայիր Նարեկը և Րաֆֆու «Խենթը» կարդալ»:

Երբ արթնացա՝ Լուսաստղը չկար: Եվ մենության մեջ սարի վրա ահավոր մտքեր պաշարեցին ինձ: Չէ որ այդ վայրը կապված էր քաջ Արաբոյի անվան հետ:

Արաբոյի անունը վառել էր իմ մանկական երևակայությոնը: Յոթ տարեկան էի, երբ առաջին անգամ ինձ պատմեցին Արաբոյի և նրա ձիու՝ Տիլիբոզի մասին:

Արաբոն կարմիր իրիցոս տներից էր, Բռնաշեն գավառակի Կուռթեր գյուղից: Մկրտության անունը Առաքել էր: Ասում էին, որ նա ապրում է Առաքելոց վանքի մոտերքը՝ դարավոր ծառերով ծածկված մի քարայրի մեջ: Ձմեռը մշակություն է անում Հալեպում, իսկ ամառները զենքը ձեռքին կռվում է քրդական աշիրեթների և տաճիկ հարստահարիչների դեմ՝ իրեն զինակից ունենալով Մխո Շահեն անունով տերգեվանքցի մի երիտասարդ: Որ ինքը և Մխո Շահենը ահաբեկում են իշխանավորներին, կողոպտում նրանց քարավանները և ավարը բաժանում չքավոր գյուղացիներին:

Արաբոյի հայրը մի անգամ տեղեկանում է, որ իր որդին գնացել է Կովկաս: Ենթադրելով, որ որդին պետք է մեծ հարստություն դիզած լինի և նրա բեռնված քարավանը շուտով հասնելու է Մուշ, գնում է, որ նրան օգնի քարավանը բերելու: Մի ծանոթի միջոցով իմանում է, որ Արաբոն Կարս քաղաքի ճամփեզրին նստած մուրճով քար է ջարդում խճուղի շինելու համար: Ծերունին մեջքից ճանաչում է զավակին և մոտենալով ասում է. «Առաքել, լաո, էդ դու՞ն ես, որ քար կջարդես: Ապա ու՞ր են քո քարվանները, որ Կովկասեն Մուշ պիտի բերեիր: Թու՛հ, մորդ կաթը հարամ լինի վրադ»: Ու հայրը առանց որդու երեսին նայելու Կարսից վերադառնում է Բռնաշեն:

Արաբոյի և իմ տեսած երազի մտքերով էի տարված, երբ գեղադեմ մի ձիավոր, իրեն թամբից վայր նետելով, ձիու սանձը բռնած՝ մոտեցավ ինձ: Հագած էր կիսաթև աբա, գլխին՝ կարմիր արախչի, ոտքերին՝ տրեխներ բրդյա գուլպաներով, թևին՝ բերդանկի:

Դու ի՞նչ գործ ունես այս քարի վրա, հարցրեց նա, կռանալով վրաս:

Նստեցի, որ հանգստանամ: Քաջ Արաբոյի մասին էի մտածում :

Արաբոն ես եմ և սա իմ քարն է: Որտեղացի՞ ես:

Մշեցի:

Յատուկ Պոէմ

Սրտոտ տղա ես երևում, որ եկել նստել ես այս քարին: Իմ ձին պահիր, ես հիմա կգամ, ասաց ու սանձը ինձ հանձնելով՝ աներևութացավ:

Նայում եմ՝ սանձը բոխս մեջ է, իսկ ինքը չկա: Աչքերս շաղվեցին: Մի՞թե սա Արաբոն էր: Ու՞ր գնաց:

Տեսնեմ՝ գետնի տակից մի խուլ ձայն է գալիս» «ձին քաշիր Մեղրի քարերի մոտ»: Մի դող եկավ վրաս: Կանչը նորից լսվեց» «Ձին քաշիր Մեղրի քարերի մոտ»:

Ձիու սանձր բռնած իջա դեպի Մեղրի քարերը: Հասա ճիշտ այն կետին, որտեղ քիչ առաջ Մելքոն վարդապետն էր կանգնած երազիս մեջ: Մեղուները տենդագին պտույտներ էին գործում երկնասլաց ժայռերի շուրջ: Կաքավները ծերպերից բխելով լցվել էին ձորերը:

Ու հանկարծ մեկը ետևից ձեռքը դրեց ուսիս:

Արաբոն էր:

Ինչպես Հայտնվեց՝ չիմացա:

Արաբոն ինձ նստեցրեց Տիլիբոզի թամբին, և մենք Մեղրի քարերի տակով ընկանք ճանապարհ: Ուր էր գնում նա, ուր էր տանում ինձ՝ չգիտեի: Ամբողջ ժամանակ մենք գնում էինք անտառների միջով: Նա այդ անտառներով անցնում էր իբրև այդ երկրի տերը, համարձակ և անվախ, և ոչ մի իշխանավոր չէր հանդգնում նրա առաջ ելնել: Ընթացքի միջոցին, մեկ էլ տեսար, ձին թափով կանգնեցնում էր որևէ ընկուզենու տակ և ծառաբնից մի կտոր չորացած աբեթ պոկելով դնում էր կայծքարին ու չախմախը զարկում: Տեղ-տեղ նա երգելով էր գնում, ձայնը գցելով, տեղ-տեղ էլ՝ հանգիստ ծխելով և դանդաղ պատմելով բեկերի և աշիրեթների դեմ մղած իր անթիվ կռիվներից, թե ինչպես շեյխի կամ աշիրեթապետի տարազով ծպտված ներկայացել է այս կամ այն գյուղի վայրագ բռնակալին և ոչնչացրել նրան իր ապարանքի մեջ:

Անհավատալի էր ուղղակի, որ ես գտնվում էի այդ հերոսական մարդու նժույգին, որին երազում նույնիսկ չէի կարող այդքան մոտիկից տեսնել: Մի քանի անգամ նա իր կարմիր արախչին դրեց գչխիս և ես ինձ այնքան հպարտ էի ըզգում, որ

պատրաստ էի նրա հետ մինչև աշխարհի ծայրը գնալ:

Անվեհեր նշանառու էր Արաբոն, և առաջին իսկ օրը նա ինձ սովորեցրեց հմուտ հրաձիգ դառնալ: Իր բերդանկին մեկ կրականի էր. տալիս էր իմ ձեռքը և, կողքիս կանգնելով վարժեցնում էր ինձ անվրեպ կրակելու ձևերին: Մի ուրիշ վարժություն էլ սովորեցրեց. ինչպես մագլցել ժայռից-ժայռ և ձիով թռիչք գործել կիրճերի և անդունդների վրայով: Արաբոյի սիրած վայրերից մեկը Շմլակ գյուղի կիրճն էր, որ տանում էր դեպի Բռնաշեն: Այդտեղ ճանապարհը շատ նեղ էր և լեռը կոչվում էր Խաչասար: Շատ կարմիր ալուչ կար Խաչասարի անտառներում, և Արաբոն ինձ հաճախ տանում էր այդ կողմերը ալուչ ուտելու: Բայց ամեն անգամ այդ ճանապարհով անցնելիս տխրում էր Արաբոն:

Կարմիր իրիցու տան «Կոճղեզ» ավետարանը պահվում էր Արաբոյի տան տոհմական սնդուկի մեջ, Կուռթեր գյուղում: Այնքան զորավոր էր, որ հին խութեցիները կռվի գնալուց առաջ նրա վրա երդվել էին: Սուրբ Կարապետի վանահոր առաջարկով Արաբոն այդ ավետարանը տանում է վանք, որ սուլթանի դեմ զենք վերցնող ռանչպարները աստվածաշնչի փոխարեն նրա վրա երդվեն: Կապում է ձիու թամբին և տանում: Ջին արագ քշելիս՝ «Կոճղեզը» ընկել էր թամբից և կորել կիրճի ճանապարհին:

Ա՛յ, այստեղ կորավ, ասում էր Արաբոն, մատնացույց անելով ինձ անտառի նեղ կածանը կարմիր ալուչների ծորում:

Արաբոյի հետ ձի հեծած Բռնաշենի լեռներով գնալը իմ առաջին դասն էր, հայոց պատմության առաջին անմոռանալի դասը:

Արաբոյի երազն էր Սասունում ստեղծել Տալվորիկ անունով մի իշխանապետություն, դրա մեջ միավորելով Սասնո և Մշո դաշտի բոլոր բերդերը:

Բերդե՛ր:

Աստված իմ, որքան շատ էին դրանք: Ամեն սարի ու սարավանդի վրա մի բերդ կամ բերդամրոց կար: Մշո հովտի վրա շինված էր Մուշեղի բերդը: Մոկնաց հովտի մեջ երևում էին Մոկնաց բերդի ավերակները: Ալվառինջի մոտ՝ Պստիկ

բերդը: Բերդակի դաշտահովտի մեջ՝ Խասգյուղի վերևում, խոյանում է առեղծվածային Սմբատաբերդը: Հենց որ Տիլիբոզը մոտենում էր այդ բերդին՝ սկսում էր խրխնջալ և սմբակներով կատաղորեն դոփել նրա քերծերը:

Մի օր Արաբոն ինձ Տիլիբոզի թամբին առած բարձրացավ Սմբատաբերդի գագաթը և այդտեղից, Սասնո լեռների միջով, ձին քշեց մինչև Փրե-Բաթմանի կամուրջը, Տիգրիսի հովիտն իջնող ճանապարհի վրա:

Սա է իմ իշխանության սահմանը, ասաց Արաբոն, ձին կանգնեցնելով կամուրջին:

Կամարներին բախվող ամեհի ջրերի որոտից ձին ծառս եղավ կամրջի վրա: Մի ակնթարթ՝ և ես թամբից պոկվելով կանհետանայի գետի հորձանքների մեջ, եթե Արաբոն ինձ չբռներ:

Բաթման անունով կամուրջ շինող մի հայտնի վարպետ կար, ասաց Արաբոն, կարմիր իրիցու ավետարանի մեջ է գրված: Սասունցիք դիմեցին նրան՝ թե եկ, մեր գետի վրա կամուրջ կապիր:

Ձեր գետի անունը ի՞նչ է, հարցրեց Բաթմանը:

Սասնա գետ:

Որտեղի՞ց է բխում:

Մարաթուկի և Ծովասարի գագաթներից:

Կկապենք, ասաց Բաթմանը:

Քարհանքը Ֆարխին քաղաքի մոտ էր: Չափն առավ ու

հիմքը գցեց:

Հաջորդ օրը եկավ տեսավ իր շինած հիմքը չկա: Երկրորդ և երրորդ անգամ գցեց՝ դարձյալ չդիմացավ: Ու զարմացավ Բաթմանը իր վարպետության վրա:

Մի ծերունի երազի մեջ եկավ՝ ասաց նրան.

Սասնա գետին հիմք չի դիմանա, Բաթման: Սրանց երկրի ջուրը որձ է: Եթե կուզես, որ քո շինած կամուրջը Սասնա ջրին դիմանա, նրա հիմքում դիր առավոտյան առաջին հանդիպած շնչավորին և որմը նրա վրա շինիր»:

Առավոտյան Բաթմանը աշխատանքը սկսելիս տեսավ սիրած կինը կերակուրը ձեռքին, շունը ետևից՝ գալիս է: Հուզվեց Բաթմանը: Շունն առաջ անցավ: Ուրախացավ վարպետը: Բայց հաց բերող կինը անհամբեր էր: Ոտքը շտապելուց դիպավ քարին և կերակուրը թափվեց: Շունը զբաղվեց կերակուրը լիզելով: Փրեշան հասավ ամուսնու մոտ: Մոռյլվեց Բաթմանը: Կինը հարցրեց տխրության պատճառը: Վարպետը պատմեց իր տեսած երազը: Կինը ասաց. «Մահը մահ է, շինիր քո կամուրջը»:

Բաթմանը կնոջը դրեց շինվածքի հիմքում և որմը շարեց:

Եթե աստված չքանդի, քանի աշխարհը կանգուն է, էս կամրջին քանդվել չկա, ասաց վարպետը և իր շինած կամրջի տակով անհետացավ գետի հորձանքի մեջ: Այդ օրվանից կամուրջը կոչվեց Փրե-Բաթման վարպետ Բաթմանի և. իր կնոջ անունով:

Արաբոն ինձ մի քանի անգամ տարավ-բերեց այդ կամուրջի վրայով և Սասնա ներքին դաշտից ձին քշեց դեպի Տալվորիկ:

Գիշերը անցկացրինք Զկնգոլում:

Այդ աղբյուրը գտնվում էր Ծիրնկատարի լանջին: Նրա վերևով անցնում էր Սասունից Մուշ և Մուշից Սասուն տանող լեռնային ճանապարհը՝ բարձր գագաթներով:

Լուսաբացին Արաբոյի հետ Զկնգոլից հասանք Ծիրնկատար և նրա բարձունքից դիտեցինք արևածագը: նա, ով չի տեսել արևածագը Ծիրնկատարից, թող երբեք չասի, թե ինքը ապրել է աշխարհում:

Անկարելի է այդ վայրով անցնել և չիջնել Կորեկ աղբյուրի վրա: Մենք էլ իջանք:

Յատուկ Պոէմ

Արաբոն Տիլիբոզին կապեց արոտ և շտապեց աղբյուր: Կռացավ, կարմիր արախչին լցրեց ջրով և խմեց: Մի գդակ ջուր էլ ինձ տվեց: Գրեթե բոլոր խութեցիք այդ ձևով էին ջուր խմում:

Բերդակի հանդում կերած սամրե ճաշից հետո ես դեռ տաք ճաշ կերած չկայի: Երկուսս էլ քաղցած էինք, իսկ մեր ունեցածը կորեկ հաց էր. փոքրիկ չոր գնդեր՝ քարի կարծրությամբ:

Այդ հացը լավ է կաթի հետ:

Արաբոն ինձ ուղարկեց հովիվներից կաթ բերելու, իսկ ինքը, աջ թևը զենքի վրա բարձ արած, պառկեց հանգստանալու:

Բավական հեռացել էի, երբ ինձ թվաց իմ ետևում ձիու խրխինջ լսվեց: Ետ դարձա, տեսնեմ մի զինված տղամարդ ձախ ոտքը հասցրել է Տիլիբոզի ասպանդակին և փորձում է թամբին բարձրանալ:

Արաբ՛ո, Տիլիբոզին փախցրին, գոռացի ես հեռվից և արագ նետվեցի դեպի ձին: Իմ գոռոցից Արաբոյի վեր թռչելն ու մի կարծր գունդ ավազակի քունքին զարկվելը՝ մեկ եղավ: Գողը անշնչացած փռվեց խրտնած նժույգի սմբակների տակ:

Ես շատ զարմացա, թե Արաբոն ինչով սպանեց հափշտակիչին, որովհետև իր պառկած տեղում միայն ծաղիկ էր ու կանաչ: Քար ու կոշտ չկար:

Ինչո՞վ սպանեցիր, հարցրի:

Կորեկ հացով:

Ժամանակ չկար այլևս կաթի ետևից գնալու: Նստեցինք աղբյուրի մոտ և կորեկ հացի վերջին կոշտերը ջրի մեջ թաթախելով կերանք:

Ու լուր տարածվեց, որ կարմիր իրիցու Արաբոն մի կտոր կորեկ հացով սպանել է իր ձին հափշտակելու եկած բագրևանդցի մի քրդի:

Այդ օրվանից այդ աղբյուրի անունը մնաց «Կորեկ աղբյուր»: Թեպետ այդպիսի զրույց պատմում էին Աղբիկ գյուղացի մի քաջ սասունցու մասին, բայց իրապես այդ աղբյուրի անունը առնչվեց Արաբոյի հետ պատահած դեպքին, որին ես անձամբ ականատես եղա:

Ընդամենը մի տարի եղա Արաբոյի հետ Բոնաշենի լեռներում:

Մի առավոտ Արաբոն շատ կանուխ արթնացավ: Ես բռնեցի ասպանդակը և նա թռավ Տիլիբոզի թամբին: Զգում էի, որ հեռու տեղ էր գնալու: Գնալուց առաջ ծոցից հանեց ընկույզի փայտից շինած մի ծխատուփ և մեկնելով ինձ՝ ասաց.

Կգնաս Կարմիր Ծառ և ինձ համար թութուն կբերես: Ապա ավելացրեց.

Եթե ինձ չտեսնես՝ բերածդ կտանես Աղբյուր Սերոբին: Նրա տեղը Սողորդն է, կողմը՝ Խլաթ:

Հետևյալ օրը ես առա Արաբոյի մահվան լուրը: Քոսուրա սարի վրա կա մի ձոր: Կոչվում է Գյալառաշ (Սև բերդ): Արաբոն զոհվել էր այդ ձորի մեջ 1895 թվականին, երբ քրդական տարագ հագած, իր հինգ ընկերներով, քնից նոր արթնացած անհավասար կռվի էր բռնվել մի ավազակախմբի հետ:

Սպանվելուց հետո նրա զենքը տեսել էին հասնանցի մի քրդի ձեռքում:

Բայց ես կատարեցի նրա պատվերը:

ԴԵՊԻ ԿԱՐՄԻՐ ԾԱՌ

Կարմիր Ծառ, ու՛ր ես, եկա՛, ասացի ու ելա ոտքի: Ծծմակից իջա Մշո դաշտ և դեպի արևմուտք գնալով՝ Աշմանուկ և Քարձոր գյուղերի տակով հասա Խորոնք: Խորոնքի վերևում Կարմիր Ծառն էր, որին օտարները Ղզլաղաճ էին ասում: Նստած էի Խոզմա լեռան ստորոտում: Աջ կողմը մի սիրուն անտառ կար կարմրատերև ծառերով: Երևի այդ էր պատճառը, որ այդ գյուղը Կարմիր Ծառ էր կոչվում:

Ես այդտեղ հասա հետևյալ օրը. Արաբոյի մահվան լուրը առնելուց հետո: Դեռ գյուղ չմտած, զգացի, որ ականջներս լավ չեն լսում: Մի խուլ ու խոր շառաչ է գալիս Ջանգակ սարի կողմից: Ես այդ ձայնը առել էի Քարձորի տակով անցնելիս: Որքան մոտեցա Կարմիր Ծառին, այնքան այդ գոռոցը ուժեղացավ: Վերջում հիշեցի, որ դա Գուռգուռա կոչվող ջրվեժի գոռոցն է Առածանու վրա, Խոզմո սարի տակ, որի թնդյունը լսելի էր շատ հեռուներից, մանավանդ պարզկա գիշերներին և վաղ առավոտյան: Արաբոն նրա մասին ասում էր» «Էդոր համար կըսեն Գուռգուռ, որովհետև ձեն կիտա ու իր ձեն երեք օրվա ճամփա կերթա»:

Քիչ-քիչ ականջներս ընտելացան այդ ջրվեժի որոտին և ես Արաբոյի ծխատուփը ծոցս դրած, մտա Կարմիր Ծառ: Այդ վայրի թութունը հռչակավոր էր: Հիշում եմ, թե ինչպես Մելքոն վարժապետը հաճախ շուկա էր գնում, որ այդ գյուղի ծխախոտից առնի:

Ամբողջ գյուղում ընդամենը մի հատիկ ծառ կար և այն էլ տնկված եկեղեցու բակում:

Առաջին իսկ հարցումից, թե որ տան ծխախոտն է հարգի, ինձ հեռվից ցույց տվեցին Արմենակ անունով մի գյուղացու, որ իրենց ասելով ամենահայտնի ծխախոտ մշակողն էր: Ասացին, որ նա Սասունի Ահարոնք գյուղից է գաղթել Կարմիր Ծառ: Երկար տարիներ եղել է Ռուսաստանում և նոր է ազատվել Կարինի բանտից:

Անցա մի քանի տնկարաններ և հասա այն տունը, որ հեռվից մատնացույց էին արել: Իմ տեսածը փոքրահասակ մի գյուղացի էր, նիհար ու ոսկրոտ կազմվածքով, գլխին կարմիր արախչի: Իր որոշ դիմագծերով նա ինձ հիշեցրեց Արաբոյին:

Բայց ինձ այդ պահին ոչ մի բան չէր հետաքրքրում: Շտապում էի իմ տուփը լցնել ծխախոտով և ելնել ճամփա:

Արմենակը ինձ նախ իր ծխախոտի մարգերը ցույց տվեց, ապա տարավ չորանոց և ամենաընտիր ծխախոտի շարանները ցույց տալով՝ հարցրեց.

Ինչքա՞ն թութուն է քեզ պետք:

Ընդամենը մի տուփ, պատասխանեցի:

Մի տուփ թութունի համար Կարմիր Ծա՞ռ ես եկել, ծիծաղելով հարցրեց նա և սաստիկ զարմացավ, որ ես մի փոքրիկ տուփ իմ ծոցից հանելով՝ մեկնեցի նրան: Նա տուփը շուռ ու մուռ տվեց, ուշադրությամբ նայեց մաշված նախշերին, կարծես ինչ-որ բան էր ուզում վերհիշել կամ մտաբերել և դժվարանում էր: Երկու անգամ աչքի տակով խորհրդավոր նայեց ինձ: Հազաց: Նորից նայեց: Ապա տուփը լցրեց ծխախոտով, մատներով ամուր սեղմեց և կափարիչը փակելով ու ինձ հանձնելով՝ ասաց.

Երևի մի նպատակ ունես, որ ընդամենը մի տուփ թութուն է քեզ հարկավոր:

Ուզեցի հայտնել, որ իմ նպատակը բարի է, բայց աչքերս, չգիտեմ ինչու, հանկարծ լցվեցին արցունքով և նա հասկացավ, որ մի վիշտ է ինձ տանջում: Նա ինքն էլ հուզվեց և առաջարկեց գնալ իրենց տուն, բայց ես կարևոր համարեցի ճանապարհ ընկնել:

Կարմիր Ծառի Արմենակը մինչև գյուղի ծայրը եկավ ինձ հետ: Փոքրիկ, վտիտ մարդ էր, շատ քչախոս: Ավելի շատ իր մտքերի հետ էր, քան թե իր շրջապատի: Երբեք չհարցրեց, թե որտեղից եմ գալիս և դեպի ուր եմ գնում: Եվ արդյոք որևէ տեղ ունե՞մ գնալու:

Անտառը հրաշալի բուրում էր: Իրար կողք-կողքի կամ իրար թիկնած հպարտ կանգնած էին բոդախին, լուսանը, կաղամախին: Բայց անտառին իշխողը կարմրատերև նորքենին էր:

Սրա ամուր, ծանր ու փայլուն փայտից մեր պապերը նետեր են շինել ինքնապաշտպանության համար, ասաց Արմենակը ծառերից մեկին մոտենալով: Այդ եղավ նրա ամբողջ խոսակցությունը: Նա այդ ծառից մի ճյուղ պոկեց, հավանորեն ձեռնափայտի համար, և դանդաղ վերադարձավ գյուղ, իսկ ես մի քանի քայլ անելուց հետո՝ վարանած կանգ առա անտառի եզրին: Ուղղակի շփոթված էի: Կանգնած մտածում եմ. ու՞ր գնալ: Մի քանի անգամ հոտ քաշեցի՝

Արաքոյի կարոտը առնելու համար, ապա տուփը դրեցի ծոցս և ինձ նետեցի դեպի Դաշտի գյուղերը՝ հայացքս Խլաթի սարերին պահած:

Որքան հեռացա Կարմիր Ծառից և Ջանգակ սարից, այնքան Գուռգուռայի գոռոցը նվազեց և ականջներս, Արածանու զայրագին թնդյունից խաղաղվելով՝ անձնատուր եղան Մեղրագետի հանդարտիկ հոսանքին:

Միայն մի տեղ կանգ առա. այդ Սողգոմն էր, հռչակված իր սոխով և անուշահամ շաղգամով: Այդ գյուղի մոտակայքում իմ հայրենի քաղաքի գետակը գալիս միանում էր Մեղրագետի ջրերին: Այդտեղ հասնելով նա սպառում էր իր կյանքը՝ խառնվելով ավելի մեծին, դառնալով անճանաչելի ու անըմբռնելի:

Իմ կյանքն էլ այդ գետակի նման էր:

Ես գնում էի դեպի Խլաթ, հեռանալով իմ ծննդավայրից և խառնվելով ավելի մեծին ու անծանոթին: Եվ արդյոք երբևիցե վերադարձ կլինե՞ր դեպի Մուշ:

Յատուկ Պոէմ